ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ալվարդ Թևոսի Զատիկյան
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի
ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
Արման Հակոբի Դանիելյան
տնտեսագիտության թեկնածու

Զարգացող երկրների տնտեսությունում, որպես կանոն, վերարտադրությունը կրում է ընդլայնված բնույթ, որն իր կողմնորոշումն ու ուղղությունը ստանում է շուկայում: Շուկայում ձևավորվում են պահանջարկի ու առաջարկի հարաբերությունը, ձեռնարկատիրական գործունեության հեռանկարները, առաջնության համար մրցությունը: Բարձր շահույթը մրցապայքար է արտադրողների, սպառողների միջև և հանդիսանում է տնտեսական հարաբերությունների կարգավորող ու վերահսկող մեխանիզմ:

Հասարակարգի կայացման ու զարգացման համար կենսական նշանակություն ունի շուկայական հարաբերությունների ակտիվացման նպաստավոր պայմանների առկայությունը: Սակայն, որքան անհրաժեշտ, այնքան աննպաստ են այդպիսիք մեր հանրապետությունում:

Դեռևս ավարտված չէ շուկայական հարաբերությունների ծավալման հիմնավոր պայմանը՝ արտադրության միջոցների ապապետականացումն ու սեփականաշնորհումը, մասնավոր սեփականատիրական հարաբերությունները չեն հասել ցանկալի մակարդակի, անկառավարելի են դարձել գները, չի գործում կամ անբավարար է գործում անշարժ գույքի շուկան, արժեթղթերի շուկան ձևավորման փուլում է, տնտեսության կայացման ու զարգացման օգտին չեն գործում ֆինանսա-տնտեսագիտական, իրավաբանական ինստիտուտները: Անընդհատ փոփոխվող և «կատարելագործվող» հարկային, մաքսային ու վարկային համակարգերը հետապնդում են պետական բյուջեի շահերը: Մանր ու միջին ձեռներեցության զարգացման, բնակչության սոցիալական պայմանների բարելավման հարցերը տեսադաշտից դուրս են մնում: Հայաստանի ՀՆԱ-ում փոքր և միջին բիզնեսի տեսակարար կշիռը տարեկան կտրվածքով աճում է առնվազն 1 տոկոսով: Նախատեսվում է, որ 2018թ. փոքր և միջին բիզնեսի տեսակարար կշիռը կկազմի առնվազն 40%՝ ներկա 30%-ի դիմաց[1]:

Օրենսդրությամբ սահմանված վճարումները կատարելուց հետո տնտեսա-

[1] «Ռազմավարություն փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018թթ.» Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն, գլուխ 3:

վարող սուբյեկտները զրկվում են սեփական տնտեսության ընդլայնված վերարտադրությունն ապահովելու համար անհրաժեշտ միջոցներից: Չդիմակայելով տնտեսվարման պայմաններին նրանցից շատերը, հատկապես նորաստեղծ մանր ու միջին ձեռնարկությունները, դադարեցնում են իրենց գործունեությունը, մյուսները ունենալով արտադրություն կազմակերպելու թույլատվություն՝ համարձակություն չեն ցուցաբերում, չեն շտապում իրականացնելու այն: Չեն գործում սեփականաշնորհված ձեռնարկությունների մեծ մասը, մնացածները չեն գործադրում իրենց ողջ հզորությունները և աշխատում են ոչ բավարար արդյունավետությամբ:

Անցած տարիների ընթացքում իրականացված տնտեսական քաղաքականությունը չի նպաստել երկիրը ճգնաժամից դուրս բերելուն: Արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի մեջ նկատվող դրական միտումները հեռու են բավարար մակարդակից: 2016թ. նախորդ տարվա համեմատությամբ չնչին չափով աճել է արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը: Ձեռնարկություններն ու կազմակերպությունները տարին փակել են վնասով: Մեծ են դեբիտորական, կրեդիտորական պարտքերը, հարկային վճարումների ապառքները, բանկերում ժամկետանց վարկերը, բնակկոմունալ ծառայությունների դիմաց վճարումները: 2016թ. վերջին տնտեսության մեջ կրեդիտորական պարտքի գերազանցումը դեբիտորականից կազմել է 26523,5 մլն դրամ[1]:

2017թ. ընթացքում բավականին աճել է վարկերի ծավալը, որոնք տրամադրվում էին հայկական առևտրային բանկերի կողմից: Այսպես՝ ՀՀ ԿԲ տվյալներով 2017թ. դեկտեմբերի վերջին վարկերի ծավալը, որոնք տրամադրվել են ռեզիդենտներին Հայաստանի 17 առևտրային բանկերի կողմից կազմել է 2 տրիլիոն 373,6 մլրդ դրամ, նախորդ տարվա՝ 2016թ., դեկտեմբերի 2 տրիլիոն 44 մլրդ դրամի փոխարեն:

Տարեկան կտրվածքով վարկերի ծավալն աճել է 329 մլրդ դրամով կամ 16,1%, ընդ որում դրամով հատկացված վարկերն աճել են բավականին արագ, քան արտասահմանյան փոխարժույթով վարկերը[2]:

Երկրի ներսում մոբիլիզացվող հնարավորությունը, միջազգային կազմակերպություններից ու այլ աղբյուրներից ստացվող միջոցները չեն բավարարում նրանց նկատմամբ ներկայացվող պահանջարկը: Պետական բյուջեն կազմվում ու կատարվում է դեֆիցիտով (եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ) և չի ապահովում տնտեսությանը ճգնաժամից դուրս բերելու, վերականգնելու ու զարգանալու անհրաժեշտ միջոցառումների

---

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2017, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, 2017, էջ 402:

[2] «Առավոտ», 9, 432 Visit as of 2018-11-26, by Google Ana.

ֆինանսավորումը: Ժամանակին ու լրիվ չեն ֆինանսավորվում նույնիսկ պետական պարտավորություններ իրականացնող ձեռնարկությունները, հիմնարկություններն ու կազմակերպությունները: Տնտեսությունը ճգնաժամից դուրս բերելու գործում անբավարար են վարկային քաղաքականության բնագավառում իրականացվող միջոցառումները: Վարկային ռեսուրսներն օգտագործվում են հիմնականում կարճատև վարկավորման նպատակներով:

Աննպաստ տնտեսական ու ֆինանսական պայմաններում պետության կողմից իրականացվող միջոցառումները շոշափելի արդյունք չեն տալիս սոցիալական ոլորտում: Գիտության, լուսավորության, մշակույթի, առողջապահության բնագավառների վերակառուցման գործընթացը կրում է շարունակական բնույթ: Աճում է գործազրկությունը, առաջին անհրաժեշտության ապրանքների գները ձգտում են միջազգային գների մակարդակին, միաժամանակ բնակչության եկամուտները աճում են շատ դանդաղ և շատ դեպքերում չեն բավարարում հարկային ու կոմունալ ծառայությունների դիմաց վճարումները կատարելուն: Բնակչության ստվար զանգվածը գտնվում է աղքատության ու գերաղքատության եզրին՝ կորցնելով սոցիալական ամենաանհրաժեշտ պայմանների բարելավման հույսերը, հանուն գոյատևման շատերն ընտրում են օտար ափերում բախտ որոնելու ճանապարհը:

Հետռեֆորմյան շրջանի կառավարությունները ունեցել են հանրապետության տնտեսությունը ճգնաժամից դուրս բերելու, ամրապնդելու ու զարգացնելու ծրագրեր: Ձեռնարկվել են նաև միջոցառումներ այդ ծրագրերը կյանքի կոչելու: Սակայն նրանց որոշ մասը չունենալով իրական հիմքեր՝ տնտեսության ճգնաժամային իրավիճակը հաղթահարելու փոխարեն նպաստել են դրա խորացմանն ու ծավալմանը (հարկային դաշտի լայնացում և խորացում, մաքսային, վարկային քաղաքականության կատարելագործում, պետական ունեցվածքի ապապետականացում և սեփականաշնորհում, անհիմն «վարկային ռեսուրսների» ավելացում, բանկերում բնակչության խնայողությունների սառեցում, փողի կուրսի իջեցում և այլն):

Այստեղ խնդիր չի հետապնդվում անդրադառնալ տնտեսության խորացող ճգնաժամի պատճառների վերլուծությանը: Վերջինս պահանջում է առանձին, համակողմանի ու խոր ուսումնասիրություն: Կարելի է միայն արձանագրել, որ հանրապետության ներկայիս կառավարությունը ժառանգել է քայքայված, աղքատ, անվճարունակ ու պարտքերի մեջ խճճված տնտեսություն:

Ընդհանրացնելով հետռեֆորմյան շրջանում հանրապետության տնտեսության գործունեության արդյունքները՝ կարելի է արձանագրել, որ տնտեսությանը բնորոշ է վերարտադրության բոլոր օղակների (արտադրություն, շրջանառություն, բաշխում, սպառում) փոխադարձ կապի ու պայմանավորվածության անհավասարակշռվածություն: Արտադրության,

ներմուծման, բաշխման ու սպառման համակարգերը գործում են իրարից անկախ: Ձևավորված չեն զարգացող երկրների տնտեսությանը բնորոշ «շուկայական քաղաքակիրթ հարաբերությունները»: Տնտեսության զարգացման դրական միտումները չունեն անհրաժեշտ նախապայմաններ: Բավարար չեն տնտեսության անվճարունակության ճգնաժամից դուրս գալու, ամուր ֆինանսական հիմքեր ստեղծելու ուղիների որոնման ու ներդրման միջոցառումները: Դանդաղ, համարյա աննկատելի են տնտեսության ու սոցիալական համալիրում իրականացվող բարեփոխումները:

Հանրապետության Ազգային Ժողովին կառավարության կողմից ներկայացված ծրագրերը ունենալով «լայն» ընդգրկվածություն՝ յուրովի են շոշափել տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները, բացահայտել հիմնախնդիրները, նշել լուծման ուղիները: Արդյունքում, տարիները և կառավարությունները հաջորդել են միմյանց, իսկ տնտեսությունը մնացել ճգնաժամային իրավիճակում:

Հանրապետության տնտեսության ճգնաժամն ունի իր օբյեկտիվ պատճառները, որոնցից կառչելով՝ փոփոխվող ղեկավարները փորձել են արդարացնել իրենց գործունեության անբավարար վիճակը: Կան նաև սուբյեկտիվ պատճառներ, որոնք ժառանգություն են ստացվել նախորդ կառավարություններից:

Դրանցից ամենակարևորը տնտեսության ֆինանսական ապահովածության հարցն է: Կառավարությունների գործունեության ծրագրերից երևում է, որ հանրապետության տնտեսության վերականգնման ու զարգացման միջոցառումների իրականացման ֆինանսական հիմքում դրվել են հարկային, մաքսային մուտքերով պետական բյուջեի համալրումը, ինչպես նաև արտասահմանյան փոխառություններն ու ներդրումները:

Անկասկած, տնտեսական, սոցիալական ու քաղաքական որոշակի հանգամանքներում այս ուղիներով ստացվող միջոցները կարող են հիմք հանդիսանալ տնտեսության ֆինանսական ապահովածության հիմնախնդիրները լուծելու համար: Սակայն նշված ուղիներն ունեն իրենց յուրահատուկ բարդությունները: Նախ, անհրաժեշտ է նշել, որ, որպես կանոն, արտասահմանյան կապիտալը ձգտում է այնտեղ, որտեղ առկա են բարվոք թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական պայմանները: Շրջափակումը, պատերազմական իրավիճակը, տնտեսության քայքայվածությունը և վճարային ճգնաժամը, հարկային, մաքսային գործող քաղաքականությունը և իրավաբանական դաշտի անբավարարությունը հիմքեր չեն տալիս հավաստելու, որ այժմ կամ մոտ ապագայում տեղի կունենա պահանջվող չափի արտասահմանյան կապիտալի ներհոսք:

Ծրագրերի իրականացման ֆինանսական ապահովվածության մյուս ուղին հարկային, մաքսային ու վարկային լծակների ընդարձակելն ու վարչարարության խորացումն է: Այստեղ նույնպես ամեն ինչ այնքան էլ հարթ չէ:

Խնդիրն այն է, որ այս դեպքում տնտեսավարող սուբյեկտների միջոցները կենտրոնացվում են պետական բյուջեում: Արտադրողները զրկվում են սեփական միջոցներով իրենց արտադրությունը կազմակերպելու, զարգացնելու հնարավորություններից (սա տեղի է ունեցել անցած տաս տարիների ընթացքում և շարունակվում է նաև այժմ): Նման պայմաններում ձեռներեցները լքում են իրենց գործունեության ասպարեզը, դանդաղում ազատ շուկայական հարաբերությունների զարգացման նախադրյալները:

Հաճախ Հայաստանը կոչվել է խորհրդային սիլիկոնյան հովիտ: Քանի որ այստեղ եղել են բազմաթիվ գիտահետազոտական ինստիտուտներ՝ բնական, տեխնիկական և ֆիզիկա-մաթեմատիկական ուղղություններով, անցկացվել են հումանիտար հետազոտություններ, մեկնարկել են ծրագրեր՝ միջուկային էներգիայի և միկրոէլեկտրոնիկայի ոլորտներում, այդ ժամանակահատվածում զարգացրել են առաջադեմ «Նաիրի» էլեկտրոհաշվողական մեքենաները, և անգամ ստեղծել են առաջին ԽՍՀՄ մագնիսական բարձով գնացքը: Սակայն, 1990-ական թվականներին, ԽՍՀՄ փլուզումից հետո, երկիրը անցավ դեպի գոյատևման մոդելը: Հետևաբար, դադարեց նաև գիտատեխնոլոգիական զարգացումը: Այսօր Հայաստանն այն երկրների շարքում չէ, որոնք հայտնվում են տեղեկատվական օրակարգում, բայց դա դեռ չի նշանակում, որ այն չունի բարձր տեխնոլոգիաներ, այս ոլորտը դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է երկրում, որը այսօր ՀՆԱ-ի 5%-ն է կազմում, և դա շատ ավելի քիչ է, քան հանքարդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտների ծավալները, սակայն տարեկան կտրվածքով աճում է մոտ 20%[1]:

Այսպիսով՝ Կառավարության գործունեության ծրագրերի իրականացման ֆինանսական ապահովվածության խնդրի լուծման ուղիները իրական են, բայց քայքայված ու աղքատ տնտեսության պայմաններում, երբ մի կողմից չի իրականացվում արտասահմանյան կապիտալների հոսքը, իսկ մյուս կողմից (հարկային բեռի ճնշման տակ) չի զարգանում երկրի սեփական տնտեսությունը: Առանց հարկային, մաքսային ու վարկային գործուն քաղաքականության արմատական փոփոխությունների ոչ միայն մոտ ժամանակներում, այլ նաև հեռավոր ապագայում տեղի չի ունենա տնտեսության բարգավաճումը:

Նախապատվություն տալով արտասահմանյան կապիտալի առավելագույն օգտագործմանը՝ նշենք, որ նրա ծավալուն հոսքը հանրապետություն տեղի կունենա դրա համար անհրաժեշտ պայմանների առկայությամբ: Վերջիններիս թվին կարելի է դասել շրջափակումից տնտեսության դուրսբերումը, հարկային, մաքսային ու վարկային նպաստավոր պայմանների ու անհրաժեշտ իրավաբանական դաշտի ստեղծումը: Իսկ երկրի ներսում իրականացվող

[1] http: //www.forbes.ru/tecnologi/362049-armyanskaya-mechta-kak-uchastniki-spiska-forbes-stroili-sovetskuyu-kremnievuyu.

հարկային, մաքսային ու վարկային լծակների կատարելագործումը կարող է ուղղված լինել տնտեսության ճյուղերի, ձեռնարկությունների, ձեռներեցների գործունեության ակտիվացմանը, բնակչության գնողունակության բարձրացմանը,

- եթե ընդունվող հարկատեսակները նպաստում են տնտեսության զարգացմանը, ձևավորում են պետական բյուջեի եկամտային մասը, ինչպես նաև կիրառման առումով պարզ են ու մատչելի: Դրա համար անհրաժեշտ է փոխել հարկատեսակների մշակման մեթոդոլոգիան և սահմանել, որ հարկի ու ցանկացած տուրքի հարկման օբյեկտը ստացած եկամուտն է: Իսկ դրույքը սահմանվում է ստացած եկամտի նկատմամբ (հաշվի առնելով ծախսերը),
- դրույքները սահմանելիս հաշվի են առնվում վճարողների ներկա ու մոտ ապագայում սպասվող հնարավորությունները, հարկվող օբյեկտի ժողովրդատնտեսական նշանակությունը,
- հարկային համալիրի վերակառուցումը իրականացվում է ոչ թե լայնացման ու խորացման, այլ կոնկրետացման ու պարզեցման ուղիով,
- վերականգնվում ու կատարելագործվում են բնակչության պատմականորեն ձեռք բերված արտոնությունները: Անհրաժեշտության դեպքում այդպիսիք ավելացվում են, կատարելագործվում՝ դառնալով պետության ու բնակչության վճարային հարաբերությունների արդարացի կարգավորման միջոց,
- բարձրացվում է հարկային քաղաքականության իրականացնող ծառայությունների պարտավորվածությունը վճարողների հարկային իմացությունը բարձրացնելու հարցերը ճիշտ հաշվարկելու ու ժամանակին վճարելու առումով: Վերացվում է վճարողների մոտ սխալ հաշվարկված գումարների հայտնաբերման դիմաց հատակ ֆոնդերին գումարների հատկացումը: Վերջինս ամենևին էլ չի նպաստում վճարային կարգապահության բարձրացմանը:

Շուկայական հարաբերությունների պայմաններում տնտեսության կառավարման գործում մեծանում է բանկերի դերը: Բանկերը դառնում են տնտեսական քաղաքականության իրականացման հիմնական հանգույցը: Հետռեֆորմյան ժամանակներում, հատկապես սկզբնական փուլում, խախտվեցին բանկերի գործունեության սկզբունքները, նրանք դուրս եկան տնտեսության զարգացման շահերին ծառայելու իրենց ավանդական պարտականությունների շրջանակներից, դարձան նեղ սեփական շահերը հետապնդող հիմնարկների: Իրականացվում են միջոցառումներ հանրապետության բանկային համակարգը միջազգային ստանդարտներին հասցնելու ուղղությամբ: Սակայն որքան նշանակալից են այդ ուղղությամբ

հաջողությունները, այնքան աննշան է բանկերի մասնակցությունը երկրի տնտեսության զարգացմանը: Այդ կապակցությամբ՝

- անհրաժեշտ է շրջադարձ կատարել վարկային ռեսուրսները տնտեսության զարգացման նպատակներին ծառայեցնելու գործում,
- լուծում են պահանջում վարկային դրույքները մատչելի դարձնելու, վարկային շուկայի գործունեությունն ամրապնդելու, երկարատև վարկավորման շրջանակները ընդլայնելու հարցերը,
- անհրաժեշտ է արագացնել բնակչության խնայողությունների ինդեքսավորման գործընթացը, այդ միջոցով բարձրացնել բանկերի դերն ու հեղինակությունը, բնակչության դրամական միջոցների հավաքագրման և տնտեսության զարգացման վարկային ռեսուրսներն ավելացնելու գործում,
- համակարգել առևտրային բանկերի գործունեությունը: Բարձրացնել նրանց պատասխանատվությանը հաճախորդների նկատմամբ,
- համակարգում կազմակերպել ուժեղ ֆինանսական ծառայություն, վերահսկել առևտրային բանկերի ֆինանսատնտեսական գործունեությունը:

Հայտնի է, որ հանրապետության նոր կառավարությունը եռանդուն աշխատանք է տանում արտաքին կապիտալի ներհոսքն ավելացնելու ուղղությամբ, ցանկալի կլիներ, որ ծրագրավորվեր նաև հարկային, մաքսային, վարկային ու վճարային քաղաքականությունը արմատապես վերակառուցելու միջոցառումները:

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ալվարդ Թեոսի Զատիկյան
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի
ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
Արման Հակոբի Դանիելյան
տնտեսագիտության թեկնածու

Համառոտագիր

Հոդվածում նշվում է, որ կառավարության գործունեության ծրագրերի իրականացման ֆինանսական ապահովվածության խնդրի լուծման ուղիները իրական են, բայց քայքայված ու աղքատ տնտեսության պայմաններում, երբ մի կողմից չի իրականացվում արտասահմանյան կապիտալների հոսքը, իսկ մյուս կողմից (հարկային բեռի ճնշման տակ) չի զարգանում երկրի սեփական տնտեսությունը: Առանց հարկային, մաքսային ու վարկային գործում

քաղաքականության արմատական փոփոխությունների ոչ միայն մոտ ժամանակներում, այլ նաև հեռավոր ապագայում, տեղի չի ունենա տնտեսության բարգավաճումը: Նախապատվություն տալով հանրապետությունում արտասահմանյան կապիտալի առավելագույն օգտագործմանը՝ նշենք, որ նրա ծավալուն հոսքը տեղի կունենա դրա համար անհրաժեշտ պայմանների առկայությամբ:

Հիմնաբառեր. Ֆինանսական ապահովվածություն, ձեռներեցություն, վարկեր, շուկայական հարաբերություններ, կառավարություն, ճգնաժամ, բիզնես, պետական բյուջե, սոցիալական ոլորտ:

ВОПРОСЫ РАЗВИТИЯ ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА И ФИНАНСОВОГО ОБЕСПЕЧЕНИЯ ЭКОНОМИКИ РА

Алвард Тевосовна Затикян
Старший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА,
кандидат экономических наук
Арман Акопович Даниелян
кандидат экономических наук

Аннотация

В статье отмечается, что реальны пути решения задач финансового обеспечения для реализации программ деятельности правительства, но в условиях разрушенного и бедного хозяйства, когда с одной стороны не осуществляется текучесть иностранного капитала, а с другой стороны (под давлением налоговой нагрузки) не развивается собственная экономика страны.

Без коренного изменения налоговой, пошлинной и кредитной политики не только в ближайшее время, но и в далеком будущем, не произойдет процветание экономики. Дав превосходство наилучшему использованию иностранного капитала, отметим, что его объемная текучесть произойдет при наличии для них необходимых условий.

Ключевые слова: финансовое обеспечение, предпринимательство, кредит, рыночные отношения, правительство, кризис, бизнес, государственный бюджет, социальная сфера.

THE ISSUES OF FINANCIAL SECURITY OF THE ECONOMY AND ENTREPRENEURSHIP DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

Alvard Tevos Zatikyan
Senior Research Associate of M.Kotanyan Institute of Economics of NAS RA,
PhD in Economics (Candidate of Sciences)
Arman Hakob Danielyan
PhD in Economics (Candidate of Sciences)

Abstract

The article states that funding required implementing programs by the Government is limited in the case of poor economy when the economy lack inflow of foreign investments and the tax burden inhibits the development of the domestic economy. Without policy shifts with respect to having viable tax, customs and credit policies the economy cannot experience growth and prosperity not only in the short-run but also over the long-run as well. By preferring the attraction of foreign capital and its utilization it could happen if the required conditions are in place.

Keywords: Financial security, entrepreneurship, loans, market relations, government, crisis, business, state budget, social area.